նեցան, և փակեցաւ եկեղեցին։ Եւ ոչ ոք կարէր ի տանէ ի դուրս ելանել. բրօք և բռնութեամբ զփափուկս կերլիս խնդրէին. և այսպէս բազմիցս յայս Բ Գ ամն կողոպտեցեալք զոլով ի զօրացն՝ աղքատացեալք են բազումք, թէպէտ վասն հալածանաց զոչինչ տուգանս են տուեալք։ (Ստեփանոս Վ. [Եւդոկիացի Պետրոսեան] առ Միխիթար. 1728 փետր. 3, ի Սեբաստիա)։

իդ.

Դարձեալ՝ լուայ զեզերումն և զլրումն հոյակապ, կամարակազմ, վիմաշէն և քարայատակ Եկեղեցւոյն[1], և կապարածածուկ փոքրիկ աշտարակին ձերոյ, և զխորհրդաւոր երիս բեմսն, և զնաւակատիս հանդիսականս, զորս արարեալ էք, և կարի մեծ եղև ուրախութիւնն իմ։ (Հայր Թեոդորոս Ցով[ն]ան[ն]իսեան առ Տէր Յոհաննէս. 1728 Յուլիս 23, ի Սենաստանի Ս. Ղազարու)։

իե.

Ցայտ լիցի քոյին վերոյգրեալ գերապատուելութեանդ. փոքթէքէզ թագաւորն[2] կամեցեր է Գ ազգին քահանայի, եպիսկոպոսի, կաթողիկոսի ըսգեստը չինել, ժամակարգութիւننին թարգմանել, խորհրդատետրին մեծութեանը թուղտ լինա, մէկ երեսն լաթիներէն, մէկ երեսն հայերէն. Ստեփան վարդապետին հետ խօսեցա. նա կու յօժարի կոր անելու ամա այսչափ բանը մէկ մարդ ոչ կարէ հաստատ գրել, հայերէնը ես պիտի գրեմ, այլ գիր գրող չիկա, այս չափ բան գրելու ժամանակ չունիմ. շատ խորհեցայ որ այս գրեանքը եթէ հրամանուցդ ձեռօքն լինա նէ կարելի է յառաջանալ... հռումերէն թարգմանող գտանք. թապաղան ԺԵ ճուլի. խօսք արանք որ լաթինէվար յունարէն գրէ... ըսգեստ մի եպիսկոպոսական ունէցի ամենայն ինչ հաստատ առին, յունաց ըսգեստ չինեցին, ասոր(ւ)ոց ըսգեստ այլ գտա նոյն ձևով կու չինեն. այս բաներս թագաւորն յանձներ է Ֆրանչիսկանին բրէֆինչեալին[3], նա այլ գիս յանձնեց որ հոգամ Ա ճաշու գիրք մի, Ա մաշտոց մի, Ա երկու էչով աւետարան մի։ (Աւգեստ [Աւգոստինոս?] եպիսկոպոս Բիւզանդիացի առ Մի. Աբրայ. 1729 Մայիս ԺԴ, ի վեծն Հռոմ)։

իզ.

Այս ամի հոկտեմբերի 21 զաղաչայ Պետրոսն [Գոտիոցեան] ըստ իր այլ նամակին հաստատեցին Պիրով, այսինքն գլուխ իշխանաց և դատաւոր ժողովրդեան. եթէ յատուկ գիր գրիցես նմա շնորհաւորիցես զիւր պիրովութիւնն՝ խիստ ախորժ թուի նմա։ (Հ. Մանուէլ Խուչկեարեան առ Միխիթար. 1730 հոկտեմբեր 18. ի Պաշուպով)։

իէ.

Ի սեպտեմբերի 1, զինուորք տեղւոյս զ70 դրօշակս պատրաստեալք իբրև զ800 հոգիք պատրաստեալք՝ ամենայն պատրաստութեամբք ի վերայ դատաւորաց յարելոցք լեալք իցեն, և մին ի նոցունց՝ երթեալ առ մատնին ծանուցեալ՝ և մատնին և այլք դատաւորք նախ քան զնոսա վառեցեալ զինուք ի նոցանէ զբազումս ըմբռնեալք կալան, և օր ըստ (օրէ) ըմբռնեն և կախեն,

---

1. Պաշպալովի նորաշէն եկեղեցւոյն մասին կ'ակնարկէ։
2. Յովհաննէս Ե. թագաւոր Փորդուգալի (1706-1750)։
3. Provinciale = Գաւառական մեծաւոր։